


## Հարցաթերթ

Աշխարհագրություն առարկայի օլիմպիադա  
դպրոցական փուլ – 2022-2023 ուստարի  
/ տևողությունը – 90 րոպե/  
10 – րդ դասարան

### Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

- Հայկական լեռնաշխարհի նշված լեռներից որի՞ նկատմամբ է արևի հորիզոնական բարձրությունը ավելի ցածր մարտի 21-ին
  - Արարատ
  - Թոնդրակ
  - Մնձուր
  - Քաջքար
- Նշված տարածքներից որո՞ւմ է միատեսակ արևային էլեկտրակայանի տարեկան արտադրողականությունը ավելի բարձր
  - Իջևանի տարածաշրջան
  - Մարտունու տարածաշրջան
  - Դիլիջանի տարածաշրջան
  - Սիսիանի տարածաշրջան
- ՀՀ տարածքում հանքարդյունաբերական ամենամեծ արժեք արտադրող մարզն է՝
  - Շիրակ
  - Գեղարքունիք
  - Սյունիք
  - Կոտայք
- Փոխակերպման արդյունքում ավազից առաջանում է՝
  - գնեյս
  - մարմար
  - ալմաստ
  - քվարց
- Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ
  - Մայրցամաքային երկրակեղևի խտությունը ավելի մեծ է՝ քան օվկիանոսայինինը
  - Անդերի հիմքում երկրակեղևն ավելի հզոր է՝ քան Կովկասյան լեռների
  - Կոնրադի մակերևույթը հանդիպում է միայն օվկիանոսային երկրակեղևում
  - Ամենախոշոր ռիֆտային գոտիներից է Կասպից ծովը
- Երկրի օրական պտույտի արդյունքում նշված գոտիներից որո՞ւմ է կորիոլիսի ուժը ավելի մեծ
  - մերձբևեռային
  - հասարակածային
  - բարեխառն
  - արևադարձային
- Համաշխարհային օվկիանոսի առավել խոր հատվածներում ջրի ջերմաստիճանը մոտ՝
  - +4°C է
  - 5°C է
  - 10°C է
  - 50°C է
- Նշված մայրցամաքներից ո՞րն է ավելի վաղ սկսել մեկուսի (մյուսներից անջատ) զարգացումը՝
  - Հյուսիսային Ամերիկա
  - Աֆրիկա
  - Եվրասիա
  - Ավստրալիա
- Համաձայն ժողովրդագրական անցման տեսության՝
  - Ներկայումս ոչ մի երկիր չի գտնվում առաջին փուլում
  - Զարգացած երկրների գերակշիռ մասը երկրորդ փուլում են
  - Հետինդուստրիալ փուլում գտնվող երկրները առաջին փուլում են
  - Ագրարային փուլում գտնվող երկրները հինգերորդ փուլում են
- Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն փուլի երրորդ ենթափուլում է փլուզվել՝
  - Ավստրո-Հունգարիան
  - Հարավսլավիան
  - Օսմանյան կայսրությունը
  - Ցարական Ռուսաստանը
- Հարավաֆրիկյան Հանրապետության բնակչության կազմում գլխավորապես հուանդացիների սերունդներին կոչում են՝
  - բանտուներ
  - պիգմեյներ
  - բուրեր
  - այներ

12. Ցիկլոնների սխեմատիկ պատկերներից որո՞ւմ է քամու արագությունը ամենաբարձրը



Պայմանական նշաններ

Իզոբարեր

1. Ա 2. Բ 3. Գ 4. Դ


13. Ո՞ր աշխարհագրական լայնության վրա կավարտի իր ուղին ճանապարհորդը, եթե նա դուրս է եկել հասարակածից՝ շարժվելով 2000կմ դեպի հյուսիս, ապա թեքվել է արևմուտք և շարժվել 500կմ, որից հետո 5000կմ գնացել է հարավ և դրանից հետո՝ 13000կմ՝ հյուսիս:

1. հասարակածի վրա 2. հյուսիսային արևադարձի վրա  
3. հյուսիսային բևեռային շրջագծի վրա 4. հյուսիսային բևեռում

14. Ճանապարհորդը 4կմ շարժվեց 90° ազիմուտով, ապա 0° ազիմուտով ևս 3կմ շարժվելուց հետո՝ ցանկացած վերադառնալ սկզբնակետ: Քանի՞ կիլոմետր պետք է անցնի ճանապարհորդը ամենակարճ ուղով սկզբնակետ վերադառնալու համար, եթե նրա ճանապարհին որևէ խոչընդոտ չկա:

1. 3կմ 2. 4կմ 3. 5կմ 4. 6կմ

15. Ո՞ր ուղղությամբ են հոսում երկու գետերը նշված տեղագրական քարտեզում



1. Գետ 1՝ արևմուտքից արևելք, Գետ2՝ արևմուտքից արևելք  
2. Գետ 1՝ արևելքից արևմուտք, Գետ2՝ արևմուտքից արևելք  
3. Գետ 1՝ արևմուտքից արևելք, Գետ2՝ արևելքից արևմուտք  
4. Գետ 1՝ արևելքից արևմուտք, Գետ2՝ արևելքից արևմուտք

## Վարձ պատասխանով առաջադրանքներ

16. Ա կետի կոորդինատներն են հյուսիսային լայնության 1°; արևելյան երկայնության 59°, իսկ Բ կետի կոորդինատներն են հարավային լայնության 1°; արևելյան երկայնության 59°: Գտնել երկու կետերի միջև ամենակարճ հեռավորությունը երկրի մակերևույթով՝ արտահայտած կիլոմետրերով:

17. Հաշվել տեղական ժամանակների տարբերությունը ըոպեններով Լոնդոնի և Ա կետի միջև, եթե Ա կետի կոորդինատներն են հյուսիսային լայնության 25°; արևելյան երկայնության 14°:

18. Ա երկրում բնակչության թիվը 10մլն մարդ էր: Մեկ տարվա ընթացքում ներգաղթեց 15000 մարդ և արտագաղթեց 8000 մարդ: Հաշվել Ա երկրի միգրացիայի ծավալը:

19. Քարտեզի մասշտաբը 1:5000000 է: Որքա՞ն սանտիմետր կկազմի Հրազդան գետից 41կմ կարճ գետի երկարությունը այդ քարտեզի վրա:

20. Ա երկրի բնակչության թիվը 20մլն մարդ է, իսկ գյուղաբնակների թիվը՝ 8մլն մարդ: Հաշվել Բ երկրի ուրբանիզացման մակարդակը, եթե այն Ա երկրի ուրբանիզացման մակարդակից 20% ավելի է:

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝

Վարդան Ասատրյան